Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 13

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<10>> սեպտեմբերի 2026թ. ք. Երևան

2026 թվականի սեպտեմբերի 10-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար
Պ. Գալստյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Մ. Հովհաննիսյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Իրավաբանական վարչության նախարարության իրավական շահերի պաշտպանության բաժնի ավագ իրավաբան, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էր հանձնաժողովի անդամ Մ. Հովհաննիսյանը: Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

2. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 դիմումի քննարկում:

3. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման իրականացման վայրի փոփոխության և լիցենզիայի վերաձևակերպան համար ներկայացված 1 դիմումի քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

Քննարկվեց՝ «ՄԻՔԱՅԵԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2026 թվականի օգոստոսի 27-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2026 թվականի օգոստոսի 27-ին լիազոր մարմին է ներկայացրել հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ թաղամասի 1-ին փողոց հ. 1/1 գործունեության վայրում:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ տեխնիկական զննության կայանի տարածքների օգտագործման իրավունքի վկայականի պատճենը և հատակագիծը և տեխնիկական զննության անցկացման գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող ապրանքների, առարկաների, սարքավորումների ստուգաչափումների դրական եզրակացությունները և տեխնիկական բնութագրերը պարունակող անձնագրերը: Կազմակերպության գործունեության վայրում ուսումնասիրություն իրականացվել է հանձնաժողովի անդամներ Պ. Գալստյանի և Ա. Ստեփանյանի կողմից:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՄԻՔԱՅԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

1) «ՄԻՔԱՅԵԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ» ՍՊ ընկերության Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն և 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

2)Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի քննարկում:

Քննարկվեց՝

«ԷԼԵՆ ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 04.09.2026թ. դիմումը՝ Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05297 լիցենզիան և N 00001-ից մինչև N 00013 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց «ԷԼԵՆ ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 04.09.2026թ. դիմումը՝ Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05297 լիցենզիան և N 00001-ից մինչև N 00013 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից նյութերը՝ ՏԾ N 05441 լիցենզիայի բնօրինակը և ներդիրների կորսյան մասին տրված հայտարարությունը բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԷԼԵՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3.Անհատ ձեռնարկատեր Աշոտ Արարատի Փոչիկյանի Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման N ԳԲ 00064 լիցենզիայի գործունեության իրականացման վայրի փոփոխության, լիցենզիայի վերաձևակերպման և N 0002 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին

Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Աշոտ Արարատի Փոչիկյանի 2026 թվականի օգոստոսի 31-ի և սեպտեմբերի 10-ի դիմումները՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման N ԳԲ 00064 լիցենզիայի N 0002 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու, գործունեության իրականացման վայրի փոփոխության և լիցենզիայի վերաձևակերպան մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ անհատ ձեռնարկատեր Աշոտ Արարատի Փոչիկյանը 2026 թվականի օգոստոսի 31-ի դիմել է լիազոր մարմնին սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման N ԳԲ 00064 լիցենզիայի գործունեության իրականացման վայրի փոփոխության համար: N ԳԲ 00064 լիցենզիայով սահմանված՝ «ՀՀ, ք. Երևան, Ավան, Աճառյան փողոց թիվ 7/6» գործունեության իրականացման վայրի փոխարեն որպես նոր վայր ներկայացվել է «ՀՀ, ք. Երևան, Ավան, Աճառյան փողոց 37/5» հասցեում տեղակայված շինությունը:

Հաշվի առնելով, որ լիցենզավորման ենթակա սույն գործունեության համար առկա է գործունեության վայրի վերաբերյալ սահմանված հատուկ պահանջներ՝ «Լիցենզավորման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Պ. Գալստյանի կողմից իրականացվել են լիցենզավորման կարգով սահմանված պահանջների ուսումնասիրություն: Միաժամանակ՝ Անհատ ձեռնարկատեր Աշոտ Արարատի Փոչիկյանը 2026 թվականի սեպտեմբերի 10-ին ներկայացված դիմումով խնդրում է նոր գործունեության վայրում տրամադրել միայն գազաբալոնների տեղադրման տեսակի ներդիր:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումները և դիմումին կից նյութերը՝ «ՀՀ, ք. Երևան, Ավան, Աճառյան փողոց 37/5» հասցեում տեղակայված

շինության հատակագիծը, տեխնիկական փորձաքննությունների եզրակացությունները և ԱՎՕ վկայականը:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԱՇՈՏ ԱՐԱՐԱՏԻ ՓՈՉԻԿՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

1) Անհատ ձեռնարկատեր Աշոտ Արարատի Փոչիկյանի կողմից որպես նոր գործունեության վայր ներկայացված «ՀՀ, ք. Երևան, Ավան, Աճառյան փողոց 37/5» հասցեում տեղակայված շինությանը համապատասխանում է ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին՝ դիմումը ենթակա է բավարարման:

2)Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան